ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՂՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Ս/Թ. Հունիսի 30-ին տեղի ունեցավ «Կովկասյան Աղվանքի պատմության և մշակույթի խնդիրներ» թեմայով գիտական նստաշրջան՝ նվիրված ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հանգուցյալ տնօրեն Լ. Ս. Խաչիկյանի ծննդյան 70-ամյակին։ Նստաշրջանը, որը կազմակերպել էին ՀՍՍՀ ԳԱ պատմության ու տնտեսագիտության բաժանմունքը և արբեալագիտության ինստիտուտը, բացեց ՀՍՍՀ ԳԱ պատմության ու տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։ Նա նշեց, որ Լ. Խաչիկյանը բազմակողմանի գիտնական էր։ Նա և՛ պատմաբան էր, և՛ բանասեր ու կարողանում էր հաջողությամբ զուգակցել այդ գիտությունները։ Նրա գիտական հետաքրքրությունների մեջ զգալի տեղ էին գրավում նաև Աղվանքի պատմության հարցերը և եթե ողջ լիներ, կլիներ նստաշրջանի հիմնական զեկուցողներից մեկը։

Իր «Աղվանքի պատմությունից» զեկուցման մեջ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանն ասաց, որ հնագույն ժամանակներից հայտնի էր Կուրից հյուսիս և մինչև Կովկասյան լեռներ ձգվող մի երկիր, որը հայերը կոչում էին Աղվանք, իսկ Կուրից հարավ ընկած էին Մեծ Հայքի իրենց տեղաբնիկ հայ բնակչությամբ Ուտիք և Արցախ նահանգները։ Այսօր իրրև Լեռնային ու Դաշտային Ղարաբաղ անունով հայտնի այդ տարածքը ժամանակին կոչվում էր Արևելից կողմանք Հայոց։ Այնուհետև զեկուցողը ցույց տվեց, թե ինչպես ֆեոդալականացման պրոցեսի խորացման, հայկական պետականության թուլացման և արտաքին (սասանյան ու բյուզանդական) ճնշման հետևանքով Ուտիքն ու Արցախը մտցվեցին Սասանյանների ստեղծած վարչական միավոր Աղվանից մարզպանության մեջ, որի հետևանքով այդ անունը տարածվեց նաև նշված հայկական նահանգների վրա, իսպառ զերծ լինելով էթնիկական բովանդակությունից։

Պատմական գիտությունների թեկնածու Բ. Հ. Հարությունյանն անդրադարձավ Աղվանից թագավորության կազմավորման ժամանակի հարցին՝ նոր նյութերով հիմնավորելով, որ այն մ. թ. ա. I դ. շուտ չէր կարող լինել։ Ապա նա ուրվագծեց Աղվանքի քաղաքական պատմությունը՝ մինչև Առանշահիկների թագավորության հիմնադրումը։ Բ. Հարությունյանը ցույց տվեց, որ Ստրաբոնի հիշատակած աղվանական 26 ցեղերը ստատիկ վիճակ չէին ներկայացնում։ Ստրաբոնից հետո բուն Աղվանքի տարածքը ենթարկվել է ալանների ճնշման տակ հյուսիսից հարավ շարժվող էթնիկ հանրույթների ներխուժումներին, որոնք հետագայում հանդես եկան «զարդարացիներ» հավաքական անվամբ։ 135—136 թթ. տեղի ունեցավ մազքութների ներխուժումը բուն Աղվանք, որոնց զբաղեցրած տարածքը հայկական «Աշխարհացույցը» կոչում է «Ասիական Սարմատիայի» տարածք։ Այս անունն ինքնին ենթադրելի է դարձնում «Աշխարհացույցը» ստեղծողի տեսանկյունը՝ ի դեմս մազքութների տեսնելու ոչ թե կազմակերպված վարչական միավորների, այլ բարբարոսների, առնվազն՝ մի շարք էթնիկ ընդհանրությունների։ Սրանց մեջ առավել ձևավորված պիտի լինեին հենց մազքութները, որոնց հետագայում հաջողվեց գրավել ողջ բուն Աղվանքը. հենց այս տարածքն է, որ ավելի ուշ կոչվեց նաև «Մազքթաց թագավորություն»։

Մազքթաց Սանեսան թագավորի՝ Հայաստանի վրա կատարած արշավանքը նկարագրող աղբյուրը ոչ մի տեղ «Աղվան» էթնանուն չի հիշատակում։ Այդ շարքում վկայված «զուգարք» անունը պետք է լինի «զարգար»։ Ապա Բ. Հարությունյանը նկատեց, որ մինչև Հայոց թագավորության անկումը Աղվանից թագավորությունը շարունակաբար, որոշ ընդհատումներով, գտնվել է հայկական թագավորության մշակութային և քաղաքական ազդեցության տակ։ Մարզպանությունների ստեղծումից անմիջապես հետո չէ, որ Ուտիքը և Արցախը մտել են Աղվանից մարզպանության մեջ։ Այդ անցումը տևական պրոցես էր, որը կատարվեց աստիճանաբար՝ 387 թ.-ից մինչև 451 թ.։ 462 թ. բուն Աղվանից թագավորությունը վերացվեց։ V դ. վերջերին Վաչագան Բարեպաշտի՝ թագավորի տիտղոս ստանալը և Առանշահիկների կամ «այսպես կոչված Աղվանից թագավորության» հիմնադրումը պարսկական քաղաքականության հետևանք էր՝ Հայաստանի մնացած հատվածին քաղաքական ուժ հակադրելու համար։

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Հ. Հակոբյանի զեկուցման վերնագիրն էր՝ «Աղվանից մարզպանության կազմավորումը և «Աղուանք» տերմինի իմաստափոխությունը»։ Նա նկատեց, որ բուն Աղվանքի քաղաքական, էթնիկական և մշակութային զարգացման ընթացքում վաղ միջնադարում միասնական աղվանական

էթնիկ ինքնագիտակցություն չձևավորվեց։ Մարզպանության ստեղծումից հետո, երբ Աղվանից մարզպանության քաղաքական ու մշակութային կենտրոնը դարձավ հայկական Աղվանքը, «Աղվանք» վարչանունը բուն աղվանական էթնիկ ընդհանրությունից զատ ընդգրկում էր նաև ապագայնա հայկական հատվածը։ Միաստվածային քրիստոնեությունը, միասնական հոգևոր կենտրոնը՝ Աղվանից կաթողիկոսությունը, միասնական վարչաքաղաքական աշխարհիկ իշխանության հետ միասին նպաստավոր պայմաններ ստեղծեցին բուն աղվանական էթնոմիավորների հետագա մերձեցման և միասնական էթնոսի ձևավորման համար։ Այդ պրոցեսն ընդհատվեց արաբական գերիշխանության հաստատման հետևանքով։

Զեկուցողը հատուկ կանգ առավ «Աղվանից աշխարհ» պատմության հիմնական աղբյուրի վրա, գտնելով, որ նրանում հայկական աշխարհին վերաբերող «Աղվանք» վարչանվանման էթնիկ ընդգրկումը հետևանք է Կուրի աշխարհի սոցիալական վերնախավի՝ հայկական կենտրոնական իշխանությանը հակադրվելու միտումի, որ բնորոշ է ֆեոդալական անշատողականության շրջանին։ Հակադրվելու այդ միտումը դրսևորվում է տեղական անշատողական ինքնագիտակցության մեջ, ինչը որոշ իմաստով ինքնուրույն գոյության իրավունք է ձեռք բերում։

Շ. Վ. Սմբատյանն անդրադարձավ Կովկասյան Աղվանքի հարավային սահմանի ճշտման հետ կապված հարցերին։ Հույն և լատին հեղինակների աշխատություններից բերած բազմաթիվ անառարկելի վկայությունների միջոցով նա ցույց տվեց, որ Կովկասյան Աղվանքը տեղադրված է եղել Կուրի ձախափնյակում։ Մինչդեռ, հակառակ տրամաբանությանը և պատմական իրողությանը, որոշ ադրբեջանցի հեղինակներ (Զ. Բունիյաթով, Ֆ. Մամեդովա, Ռ. Գեյուշև և այլք) փաստերի բացահայտ կեղծման ճանապարհով փորձում են Աղվանքի սահմանների մեջ ներառնել Մեծ Հայքի հյուսիս-արևելյան երկրամասերը՝ Ուտիքը, Արցախը, Փայտակարանը և Սյունիքը։ Զեկուցողը համոզիչ փաստերով ցույց տվեց, որ նշված հեղինակների հակագիտական մարգանքների նպատակը ներկայիս Ադրբեջանական ՍՍՀ սահմանների արդարացումն է։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ս. Առաքելյանն իր «Բուն աղվանական էթնոմիավորումներն ուշ միջնադարում» խորագրով զեկուցման մեջ քննության առավ միջնադարում էթնիկ պրոցեսների, մասնավորապես հնարավոր ձուլման ու մերձեցման հարցերը, գտնելով, որ բուն աղվանական էթնոմշակութային միավորների ճակատագրի վերաբերյալ համապատասխան մասնագիտական գրականության մեջ առկա է միակողմանի մոտեցում, ըստ որի միջնադարի Անդրկովկասում կրոնական, առավել ևս դավանական պատկանելությունը հաճախ վճռորոշ էր էթնիկ դիմագիծը բնութագրելու համար և որ միարնակ եկեղեցու հետևորդները հաճախ հայանում էին, երկարնակները՝ վրացանում, իսկ մահմեդականացածները՝ առնվազն ապազգայնանում։ Զեկուցողը շեշտեց, որ իրականում միջնադարում էթնիկ պրոցեսներն ավելի բնթանում էին առանձին խմբերի ներքին զարգացման, քան թե մերձեցման և առավել ևս ձուլման ճանապարհով։ Վստահ կարելի է ասել, որ մինչև XVIII դ. սկիզբն այսօրվա Ադրբեջանական ՍՍՀ հյուսիսում՝ Շիրվան-Շաքի-Զաքաթալա գոտում, որտեղ կային համեմատաբար անկախ տեղական իշխանություններ, պահպանվել էին տեղական լեզուները, միաբնակ քրիստոնեությունը և կենցաղամշակութային էթնիկ առանձնահատկությունները։ Չնայած մահմեդականացված՝ իրենց լեզուներն ու էթնիկ դիմագիծը պահպանել էին նաև բուն աղվանական մյուս էթնիկ միավորները, որոնք եկվոր թյուրքական ցեղերի կոտորածից փրկվելու նպատակով հարկադրաբար լքել էին իրենց հողերն ու բարձրացել լեռները։ Այս գոտում ապազգայնացում և ձուլում է դիտվում XVIII դ. սկսած՝ եկվոր թյուրքալեզու քոչվորների նստակեցության անցման և բռնի մահմեդականացման շրջանում։

«Կովկասյան Աղվանքի պատմության հիմնական աղբյուրները և նրանց ուսումնասիրման վիճակը» թեմայով զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու Հ. Գ. Սարգսյանը նշեց, որ հայագիտության զարգացման արդի փուլում, երբ Աղվանքի պատմության ու մշակույթի առանցքային խնդիրների լուսաբանման առումով բնորոշվել են տարբեր միտումներ և ուղղություններ, պատմագրական հետազոտություններն առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում։ Պատմագրական հետազոտություններն առավել նպատակահարմար է սկսել աղբյուրագիտական աշխատությունների քննությունից, քանի որ այդ կարգի աշխատանքները սովորաբար հարցերի սահմանափակ խումբ են արծարծում։ Այնուհետև զեկուցողն անդրադարձավ Աղվանքի պատմության խնդիրներին առնչվող հայկական աղբյուրների ուսումնասիրության և հրատարակության վիճակին, դրանցից առանձնացնելով միջնադարյան հայ մշակույթի ականավոր գործիչ Մխիթար Գոշի «Աղվանից ժամանակագրությունը»։ Նշելով այդ երկի թարգմանության հետ կապված դժվարությունները, Հ. Մարգարյանը կետ առ կետ ցույց տվեց նրա անգլերեն (Զ. Դոուսեթ) և ռուսերեն (Զ. Բունիյաթով) թարգմանություններում տեղ գտած անճշտությունները։ Նա համոզիչ փաստերով ա-

պացուցեց, որ Մխիթար Գոշի Երկի բունիաթով-յան ռուսերեն հրատարակությունն անհաջող թարգմանություն-գրագողություն է Զ. Դուսեբի անգլերեն հրատարակությունից։ Նրանում դրսևորվել է ադրբեջանցի պատմաբանի մասնագիտական ցածր պատրաստվածությունը և պատմական իրականությունը բոլոր միջոցներով ի վնաս հարևան հայ ժողովրդի պատմության խեղաթյուրելու անսթող և աննեղելիորեն առ այսօր չդատապարտված միտումը։ Ապա Հ. Մարդարյանը նկատեց, որ Զ. Բունիյաթովն այդ առումով ադրբեջանական պատմաբանների մեջ բացասություն չի կազմում։ Դա հետևանք է այն իրողության, որ հայկական սկզբնաղբյուրների թարգմանարար հրատարակման կամ մեկնաբանման ժամանակ ադրբեջանական մի շարք պատմաբանների թույլ տված սխալները պատահականության արդյունք չեն, այլ հայ ժողովրդի պատմության նենգափոխման ու աղքատացման նպատակ են հետապնդում։ Ժամանակն է պատշաճ հակահարված տալ այդ արատավոր պրակտիկային։

Պատմական գիտությունների դոկտոր Պ. Մ. Մուրադյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ XII—XIII դդ. կարծեցյալ աղվանից գրականության հարցին։ XII—XIII դդ. հայալեզու աղվանից գրականության մասին 1960-ական թվականներին Զ. Բունիյաթովի առաջ քաշած թեզը, որն այսօր ջանադրաբար պաշտպանվում է ադրբեջանական պատմաբանների կողմից, ասաց զեկուցողը, 1930-ական թվականների պաշտոնական դիրքորոշման տարատեսակներից մեկն է։ Երբ Շիրվանի ու Աղվանքի միջնադարյան պարսկալեզու հեղինակներն ադրբեջանցի էին հայտարարվում։ Գրական հուշարձանի էթնոմշակութային պատկանելությունը, նկատեց Պ. Մուրադյանը, որոշվում է ոչ այնքան նրա գոյացման աշխարհագրական միջավայրով, որքան բովանդակության գործոնով, գրական ավանդույթով, լեզվով, բանաստեղծականությամբ և այլն։ Այն ժամանակաշրջանում, երբ ստեղծագործում էին Շիրվանի ու Աղվանքի պարսից գրականության դասականները, պատմությունը չգիտեր այն ժողովրդի գոյության մասին, որին այժմ վերագրվում են նրանք։ Ինչ վերաբերում է այսպես կոչված XII—XIII դդ. «աղվանից գրականությանը», ապա դա բացահայտ կեղծիք է թեկուզ այն պատճառով, որ դրանից շատ առաջ աղվանից հասարակությունը դադարել էր էթնիկ իրողություն լինելուց։ Բացի այդ, Արցախը երբեք չի եղել «աղվաններ» հավաքական անունով հայտնի ցեղերի բնակության միջավայր։ Գոշը, Կիրակոս Գանձակեցին և Աղվանքից սերած մյուս հեղինակները հայ հանրության ներկայացուցիչներ էին և արտահայտում էին նրա շահերն ու իղձերը, ստեղծագործում բացառապես մայրենի հայերենով։ Իրենց ստեղծագործություններում նրանք բազմիցս խոսում են իրենց էթնիկական, քաղաքական ու մշակութային պատկանելության մասին, հարցաթերթիկային ճշգրտությամբ բնորոշելով իրենց հայ լինելը։ Ավելին, նրանք պատկերացում անգամ չունեն աղվանից հանրության գոյության մասին, որին պետք է պատկանեին որոշ ադրբեջանցի պատմաբանների կամքով։ Միջնադարի պատմության նման արդիականացումը, վերջում նկատեց Պ. Մուրադյանը, մոլորության մեջ է գցում նախ և առաջ ադրբեջանական ժողովրդին, որն ունի սեփական պատմությունը և մշակութային արժեքները։

Հայ ճարտարապետության արցախյան զրպրոցին նվիրված իր զեկուցման մեջ ճարտարապետության թեկնածու Մ. Մ. Հասրաթյանը նշեց, որ միջնադարյան Հայաստանի ճարտարապետության պատմության մեջ առանձնանում են մի շարք ստեղծագործական դպրոցներ՝ Անիի, Սյունիքի, Վասպուրականի, Լոռու, Արցախի։ Վերջինիս ծաղկումը XIII դ. կապված էր Խաչենի հայկական ֆեոդալական իշխանության հզորացման հետ։ Հենց այդ ժամանակ ստեղծվեցին արվեստի այնպիսի գործեր, որոնք մտան հայ ժողովրդի գեղարվեստական ժառանգության ոսկե ֆոնդը։ Հայ ճարտարապետության արցախյան դպրոցի գլուխգործոցները հիմնականում կենտրոնացված են Գանձասարի, Դադիվանքի, Խաթրավանքի և այլ վանական համալիրներում։ Վերջին տարիներին, այնուհետև ասաց զեկուցողը, արցախյան հայ ճարտարապետության հուշարձանները դարձել են նաև ադրբեջանցի մասնագետների ուշադրության առարկան։ Ռ. Գեյուշևը, Դ. Ախունդովը և նրանց երիտասարդ հետևորդները, հակառակ պատմական փաստերին, վիմագրական տեղեկություններին ու ճարտարապետական առանձնահատկություններին, Արցախի վանքերն ու եկեղեցիները, զրանց պատկերաքանդակներն ու որմնանկարները հայտարարում են աղվանական, ձգտելով դրանք օտարել հայկական մշակույթից։ Նման փորձերը ոչ միայն միտումնավոր են, այլև հակագիտական և նպատակ ունեն ապակողմնորոշել ընթերցողին, եզրակացրեց զեկուցողը։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Լ. Պետրոսյանի «Արցախի միջնադարյան հուշակոթողները» զեկուցման մեջ ներկայացվեցին Արցախի վաղ միջնադարյան քառակող կոթողները, որոնք կառուցողական, տիպաբանական և զարդանախշման առումով չեն տարբերվում Հայաստանի այլ նահանգներում ևս լայնորեն հայտնի նման հուշարձաններից։ Դրանք հիմնականում սյունանման կոթողներ էին՝ տեղադրված զանգվածեղ պատվանդանի վրա և պը-

ստկվում էին խոյակով ու դրա վրա ամրացվող թեավոր խաչով։

Արցախի հուշակոթողների շարքում առանձնակի տեղ ունեն մարդակերպ սյունանման կոթողները, որոնք տեղակայված են Պարտավի շրջակայքում։ Դրանց տիպաբանական քննությունը և համադրումը Մովսես Դասխուրանցու երկի հստակ տեղեկությունների հետ, տարակույս չեն թողնում, որ այդ կոթողները թողել են VII դ. 20-ական թվականներին Անդրկովկաս արշաված և համարյա երկու տարի Պարտավի շուրջ բնակված խազարները։ Հատկանշական է, որ այդ կոթողները չունեն զարգացման ոչ նախորդ և ոչ էլ հաջորդ օղակներ։ Դրանք ինչպես հանկարծակի երևան եկան, այնպես հանկարծակի էլ անհետացան։ Ոատի ադրբեջանցի մի շարք գիտնականների հայտարարությունները, թե դրանք ունեն աղվանական ծագում (Ռ. Դեյուշև, Մ. Խալիլով), գիտական որևէ հիմք չունեն և արդյունք են Ադրբեջանական ՍՍՀ-ում և նրա շուրջ գտնվող բոլոր հուշարձանները «աղվանացնելու» զուտ քաղաքական նպատակներ հետապնդող կոնցեպցիային կուրորեն հետևելու։

Զեկուցման գերակշիռ մասը նվիրված էր Արցախի խաչքարերի տեխնիկական և իմաստաբանական բնութագրի, դրանց՝ որպես համահայկական մշակութային ֆենոմենի առաջացման և զարգացման հարցերին։ Մանրամասն դիտարկվեցին հատկապես խաչքարի հորինվածքային կառուցվածքի և խաչքարային արձանագրության կառուցվածքի փոխհարաբերության հարցերը։ Ըստ Հ. Պետրոսյանի, նման կառուցվածքային քննությունը հնարավորություն է ընձեռում պարզելու, որ խաչքարի զանգվածային տարածման հիմքում ընկած էր խաչի, որպես համընդհանուր միջնորդի, ժողովրդական ընկալումը։

Վերջում կատարած քննության լույսի ներքո զեկուցողն անդրադարձավ նաև Արցախի խաչքարերի էթնոմշակութային պատկանելության հարցին։ Նա նկատեց, որ այն ժամանակ, երբ սկսվեց խաչքարերի ձևավորումը, Աղվանքում որդեն ընթանում էին մասնակի ապազգայնացման և մահմեդականացման գործընթացներ, որոնք ոչ միայն չէին կարող հանգեցնել խաչքարերի առաջացմանը, այլև թեկուզ նրանց հեռավոր նմանակների երևան գալուն։

«Աղուանք» տերմինը ուշ միջնադարում» զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու Պ. Ա. Զորաբյանը նկատեց, որ «Աղուանից» կոչվող կաթողիկոսությունը, որի հոգևոր իրավասության ներքո էր Արևելյան Անդրկովկասի հայ ազգաբնակչությունը, այն հայկական հինգ հոգևոր առաջնորդարաններից մեկն էր (Գանձասար, Աղթամար, Սիս, Երուսաղեմ, Կ. Պոլիս), որոնք, ստեղծված լինելով քաղաքական տարբեր իրավիճակներում և հայկական միջնադարի տարբեր փուլերում, ենթարկվում էին էջմիածնի, Ամենայն հայոց կաթողիկոսին և նրանից ստանում հաստատության կոնդակ։

Պատմական «Աղվանից» անվանումը պահպանելով հանդերձ, որը թելադրված էր տարածքի անվանման ավանդական ընդունելի ձև լինելու հանգամանքով, կաթողիկոսությունը և ողջ թեմը երբեք այդ անվանմանն իրական էթնիկ բովանդակություն չեն վերագրել և ողջ ուշ միջնադարում այդ անվանումով սահմանագծել են միայն թեմի տարածքը։

Այնուհետև զեկուցողը հայկական, վրացական, ռուսական, պարսկական պատմողական սկզբնաղբյուրներից ու պատմական այլ վավերագրերից քաղված վկայակոչումներն ըստ «Աղվանք» տերմինի բովանդակության ու նշանակության խմբավորեց հետևյալ կերպ։ 1. Վավերագրեր, որտեղ «Աղվանք» տերմինն ընկալվում է որպես Գանձասարի կաթողիկոսական թեմի ողջ տարածք։ 2. Միայն Կուրից հյուսիս ընկած բուն Աղվանքի տարածքը։ 3. Միայն Կուրից հարավ ընկած տարածքը, սակայն որպես Հայաստանի «Գաւառն Աղուանն»։ 4. «Աղվան» տերմինով նշվում էր բնիկ լինելու հանգամանքը. «Մենք աղուանք ենք, ազգաւ ոտի»։ Վերջում Պ. Զորաբյանը նկատեց, որ «աղվան» անունով ժողովրդի, էթնոսի գոյությունը ենթադրելուն նպաստել են ինչպես վաղ հայկական պատմագիրների և մասնավորապես Մովսես Դասխուրանցու «Պատմությունը», այնպես էլ աֆղան ժողովրդի գոյության փաստն Աֆղանստանում։ Ըստ այդմ էլ միջնադարում ստեղծվել է կոնցեպցիա, ըստ որի, իբր հնում եղել է աղվան անունով հայտնի ժողովուրդ, որը Լենկ Թեմուրի կողմից տարագրվել է Աֆղանստան և այնտեղ մահմեդականություն ընդունել։

Մ. Մ. Կարապետյանի զեկուցումը նվիրված էր XVII—XVIII դդ. Ղարաբաղի բնակչության էթնոդավանական կառուցվածքին։ Հենվելով XVII—XVIII դդ. հայ-վրացական, պարսկա-թուրքական, ռուսական ու արևմտաեվրոպական աղբյուրների միանշանակ վկայությունների վրա, զեկուցողը ցույց տվեց, որ նույնիսկ հիշյալ ժամանակաշրջանում Ղարաբաղի (որը վարչականորեն ընդգրկում էր անհամեմատ ավելի մեծ տարածք, քան այժմ) բնակչությունն էթնիկապես հայկական էր և միատարր։ Ղարաբաղի էթնիկական կազմում փոփոխություններ սկսեցին կատարվել XVI դ. կեսերից սկսած, երբ թյուրքական ու քրդական որոշ ցեղեր Սեֆյանների կողմից վերաբնակեցվելով՝ տիրություններ ստացան Ղարաբաղի հարթավայրային ու նախալեռնային շրջաններում։ Վերաբնակեցված բորչա-

լումներին (Լոռիում), ղաչարներին (Գանձակի շրջանում), շամսադինլումներին (Տավուշի ու Զաքամի շրջաններում), ղազախներին (Աղստեի հովտում), ինչպես նաև «Իգիրմիզորդ (էյ. 29) և «Օթուզ-իքիթ» (էյ. 32) թյուրքական ու քրդական ցեղային միավորումներին «խորթ էր ինչպես իրանական, այնպես էլ ադրբեջանական հայրենասիրությունը» (Ի. Պ. Պետրուշևսկի), այսինքն դրանք չէին կազմում մեկ առանձին էթնիկական հանրություն։ Դրա լավագույն ապացույցներից մեկը ժամանակի աղբյուրներում «ադրբեջանցի» տերմինի բացակայությունն է։

Այնուհետև Մ. Կարապետյանը նշեց, որ աղբյուրները XVII—XVIII դդ. արձանագրում են Ղարաբաղից հայ բնակչության արտագաղթ և այնտեղ թյուրք ու քուրդ էթնիկ միավորների ներթափանցում։ Չնայած դրան, Ղարաբաղի լեռնային մասը մնաց հայկական, և միայն XVIII դ. կեսերին թյուրքական զվանշիր ցեղին հաջողվեց թափանցել շրջանի լեռնային մաս։ Այդուհանդերձ, նկատեց զեկուցողը, հայկական և այլ էթնիկական հանրություններն ունեին հստակ արտահայտված էթնիկական սահմաններ։ Ղարաբաղի լեռնային մասում չկա ոչ հայ էթնիկ տարրի ձեռքով հիմնադրված որևէ բնակավայր։

Այնուհետև ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Բ. Առաքելյանը, Ս. Երեմյանը, Կ. Բալայանը, Մ. Զաբդարյանը, Զ. Խաչատրյանը և ուրիշներ։

Գիտական նստաշրջանի արդյունքները ամփոփեց Բ. Ն. Առաքելյանը։

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ